Child Care Resource Center™

Quality · Support · Development · Education

Ծրագրի տեղեկատվական ձեռնարկ

2024 - 2025թթ

866 - 67 - 4KIDS | ccrcca.org |

Բովանդակություն

Բարի գալուստ CCRC Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագիր 1

CCRC-ի մասին 2

Մեր տեսլականը 2
Մեր առաքելությունը 2
Արժեքները 2
Մենք առաջարկում ենք հետևյալ ծրագրերը 2

Կենտրոնի Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագրի անցկացման վայրերը 3

Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության Երեխաների խնամքի գործընկերություն և Երեխաների ընտանեկան խնամքի տարբերակների մատակարարողներ 3

Երեխաների ընտանեկան խնամքի ցանց (FCCHEN) 3

Ներածություն 4

Վարքագծի կանոններ 6

Ուսումնական տարվա օրացույց 7

Ծրագրի ոչ-աշխատանքային օրերը և սաների ազատ օրերը 7

Կրթական ծառայությունները 8

Կրթական փիլիսոփայությունը 8

Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության Տանն իրականացվող ծրագիր 9

Տանն իրականացվող ծրագրի ուսումնական պլան 9
Տանն իրականացվող ծրագրի տնային այցեր 9
Տանն իրականացվող ծրագրի սոցիալականացման բաղադրիչ 9

Երեխայի խնամքի գործընկերություն (CCP) տարբերակ 11

CCP տարբերակով իրականացվող ծրագրի ուսումնական պլան 11
CCP տարբերակով իրականացվող ծրագրի մարզիչի աջակցություն 11

Երեխաների ընտանեկան խնամքի տանը կրթական ցանցի (FCCHEN) տարբերակ 12

FCCHEN ծրագրին մասնակցել ցանկացող ընտանիքների որակավորումներ 12
FCCHEN ծրագիրն առաջարկում է 12

Տանն անցկացվող համակցված տարբերակ 14

Տանն անցկացվող համակցված տարբերակում կիրառվող ուսումնական ծրագրեր 14

Կենտրոնում անցկացվող տարբերակ 16

Head Start/CSPP ծրագրեր 16
Վաղ Head Start/CCTR ծրագրեր 16
Կենտրոնում անցկացվող ուսումնական ծրագիր 16
Բացօթյա և սենյակային ուսուցման միջավայրեր 16
Սահմանված ռեժիմ 17
Հագուստ 17
Դասի պլաններ 18
Տնային այցեր և ծնող-ուսուցիչ հանդիպումներ 18
Ձուգարանից օգտվելու հմտություն 19
Տակդիրներ 19
Անձնական իրեր 19
Կայանատեղի և անվտանգություն 19
Խուսափում կրոնական քարոզից 19

Բաց դռների քաղաքականություն 19
Դպրոցից վերցնելու/Դպրոց բերելու ընթացակարգեր 20
Բացակայություններ 20
Երեխային ուշ վերցնելու քաղաքականություն և ընթացակարգ 20
Ընտանեկան թույլատրված արձակուրդ (LOA) 20
Սանի ազատումը 21
Տոներ 21

Առողջապահության և սննդի մատակարարման ծառայություններ 22

Առողջություն և վաղ մանկական զարգացում 22
Առողջության պահանջներ 22
Պատվաստումներ 22
Ատամների հիգիենա 22
Առողջական վիճակի ամենօրյա ստուգում և հիվանդ երեխաների չընդունում 23
Դեղերի ընդունում 24
Թեթև վնասվածքների մասին զեկույցներ 24
Առողջության/Հրատապ հարցերի մասին տեղեկություններ 24
Համայնքային առողջապահության խորհրդատվական կոմիտե 24
Դուլայի ծառայություններ 24

Սննդակարգի ծրագիր 25

Երեխայի ընդհանուր խնամքի և զարգացման ծրագրերի մասին տեղեկատվություն 26

Բողոքարկման իրավունքներ (միայն CSPP և CCTR ծրագրերի շրջանակում) 26
Հասարակայնության հետ կապեր 26
Լուսանկարներ և կենտրոնի գործունեության տեսանկարահանում 26
Ծնողի նախընտրություն 27
Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագրեր 27
Երեխաների կասկածվող չարաշահման քաղաքականություն 27

Անձը նույնականացնող տեղեկատվության (PII) վերաբերյալ տարեկան ծանուցում 28

HIPAA Գաղտնիության քաղաքականության համապատասխանում 28

ԱՄՆ Գյուղատնտեսության վարչության խտրականության բացառման մասին հայտարարությունը 29

Հոգեկան առողջության և առողջ ապրելակերպի խթանում 30

Ծառայություններ հաշմանդամների համար 30

Ընտանեկան ներգրավվածություն 31

Ծրագրի կառավարման առաջնորդության հնարավորություններ 32

Քաղաքականության մշակման խորհուրդ 32
Ծնողական կոմիտեի ամենամսյա հանդիպումներ 32
Ծնողների կրթություն 32
Տղամարդկանց ներգրավվածություն 33
Կամավորներ 33

Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության և CSP առողջ դպրոցների մասին օրենքի ծանուցում Թունաքիմիկատների և վնասատուների ինտեգրված կառավարման մասին 34

Հղում Կալիֆորնիայի լիցենզավորման ձևաթղթերին 35

Բարի գալուստ CCRC Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագիր

Բարի գալուստ Երեխայի խնամքի ռեսուրսների կենտրոնի (CCRC) Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագիր Մենք շատ ուրախ ենք, որ նախընտրել եք գրանցել Ձեր երեխային մեր ամբողջապես ներառական բարձրորակ վաղ կրթության ծրագրերից մեկում: Մենք ցանկանում ենք, որ Ձեր փորձը մեզ հետ լինի դրական և գիտակցում ենք, որ սա կարևոր է Ձեր և Ձեր երեխայի համար, և դուք կարող եք ունենալ բազմաթիվ հարցեր: Հուսով ենք, որ այս Ծրագրի տեղեկատվական ձեռնարկում պարունակվող տեղեկատվությունն օգտակար կլինի Ձեզ համար, և դուք կօգտագործեք այն ըստ անհրաժեշտության: Խնդրում ենք թույլ տալ օգնել Ձեզ՝ տրամադրելով օգտակար ցանկացած տեղեկություն:

Ձեր ներդրումն արժեքավոր է և անհրաժեշտ է ծրագրի հաջողության համար: Մենք ակնկալում ենք մեր ծրագրում ողջունել Ձեր ընտանիքին, Ձեր երեխային և Ձեզ և միասին աշխատել՝ մաս դառնալով Ձեր երեխայի աճի ու զարգացման ընթացքում:

Հարգանքով՝

Բեատրիս (Բեթթի) Զամորանո-Պեդրեգոն (Beatriz (Betty) Zamorano-Pedregon)

Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագրի տնօրեն

CCRC կենտրոնի մասին

Երեխայի խնամքի ռեսուրսների կենտրոնը (CCRC) 1976 թվականից ի վեր ծառայություններ է մատուցում երեխաներին, ընտանիքներին և մանկական խնամքի մատակարարներին: CCRC կենտրոնը կառավարում է ծրագրեր՝ աջակցելով երեխաների խնամքի և երեխաների խնամքի համար ընտանիքներին տրվող ֆինանսական օգնություն գտնելու և ընտրելու հարցերում: Երեխաներն ու ընտանիքներն օգտվում են մեր ծրագրերից՝ որը ծնողներին թույլ է տալիս գնալ աշխատելանքի և հաճախել դասերի՝ նպաստելով տնտեսությանը և ամրապնդելով իրենց ընտանիքներն ու համայնքը:

Մեր տեսլականը

Առողջ և ուժեղ երեխաներ և ընտանիքներ, որոնք ապրում են ծաղկող համայնքներում:

Մեր առաքելությունը

CCRC-ն լավարկում է երեխայի, ընտանիքի և համայնքի բարեկեցությունը:

Արժեքներ

- Մենք ձգտում ենք գերազանցության այն ամենում, ինչ անում ենք:
- Մենք ստեղծում ենք մեր համայնքին ծառայելու նոր և նորարարական ուղիներ:
- Մենք մեր արժեքները մարմնավորում ենք համագործակցության միջոցով:
- Մենք հարգանքով ենք վերաբերվում բոլորին:
- Մենք նվիրված ենք յուրաքանչյուր հաճախորդի հաջողությանը:
- Մենք ազնիվ ենք մեր ամենօրյա գործողություններում

Մենք առաջարկում ենք հետևյալ ծրագրերը

- Վաղ Head Start 0-3 (կենտրոնում)
- Վաղ Head Start 0-3 և Հղի կանանց ծրագիր (տանը)
- Երեխայի ընդհանուր զարգացման ծրագիր 0-3 (CCTR)
- Վաղ Head Start Երեխայի խնամքի գործընկերություն 0-4
- Head Start նախադպրոցական 3-5 (կենտրոնում)
- Կալիֆորնիայի նահանգային նախադպրոցական ծրագիր 3-5
- Head Start Երեխաների ընտանեկան խնամքի տուն 3-5

Ավելին իմանալու և ռեսուրսներ գտնելու համար այցելեք մեր կայք՝ www.ccrcca.org/headstart կամ սկանավորեք QR կոդը:

Կենտրոնի Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագրի անցկացման վայրերը

Վայրը գտնելու համար անցեք մեր հղմամբ կամ սկանավորեք QR կոդը
www.ccrcca.org/headstart/locations/list-of-head-start-locations/

Վաղ մանկության շրջանում խնամքի և երեխայի կրթության խնամքի գործընկերություններ և Ընտանիքում երեխայի խնամքի տեսանկերի մատակարարողներ

Մեր գործընկերությունների և Ընտանիքում երեխայի խնամքի տեսանկերի մատակարարողների ցանկը դիտելու համար անցեք մեր հղմամբ կամ սկանավորեք QR կոդը
www.ccrcca.org/headstart/locations/list-of-contracted-providers-for-hs-ccp-option/

Երեխայի խնամքի ընտանեկան ցանց (FCCHEN)

FCCHEN-ի թարմացված ցուցակը ստանալու համար խնդրում ենք կապվել Ձեր Case Worker-ի հետ:

Ներածություն

Բարի գալուստ Երեխայի խնամքի ռեսուրսների կենտրոն (CCRC): CCRC պարտավորվում է նպաստել երեխաների օպտիմալ զարգացմանը և ընտանիքի բարեկեցությանը՝երեխայի որակյալ խնամքի հասանելիության միջոցով: Որպես կազմակերպություն՝ մենք պարտավորվում ենք ապահովել երեխաների որակյալ խնամքի հասանելիություն Սան Ֆերնանդոյում, Սանտա Կլարիտայում, Անտելոպյան հովիտներում և ամբողջ Սան Բերնարդինո վարչաշրջանի ընտանիքներին: Միասին աշխատելով՝ մենք կբարելավենք երեխաների և ընտանիքների կյանքը Լոս Անջելեսում և Սան Բերնարդինո վարչշրջանում:

Երեխաների խնամքի ռեսուրսների կենտրոնը (CCRC) հիմնադրվել է 1975 թվականին որպես կամավորական կազմակերպություն: 1976 թվականին որպես ընկերություն գրանցվելուց հետո, այն սկսել առաջարկել Աղբյուրների և ուղղորդումների (R&R) ծառայություններ: 1976 թվականին, Կալիֆորնիայի կրթության վարչությունը (CDE) CCRC-ին դրամաշնորհ շնորհեց, որից հետո գործակալությունը սկսեց սուբսիդիաներ տրամադրել ցածր եկամուտ ունեցող ծնողներին՝ օգնելու հոգալ երեխաների խնամքի ծախսերը:

Վարքագծի կանոններ

Ծրագրի բոլոր մասնակիցների միջև և նրանց շրջանում բարեկիրթ և հարգալից պահվածքը կարևոր է CCRC Վաղ մանկակության շրջանում խնամքի և կրթության ծրագրի առաքելությունն իրականացնելու և երեխաների, ընտանիքների և անձնակազմի համար ապահով և դրական միջավայր ապահովելու համար: Աշխատակիցները, ծնողները/խնամակալները, կամավորները, մասնակիցները և ծրագրում ներգրավված ցանկացած այլ անձ պետք է հետևի ստորև ներկայացված Վարքագծի կանոններին:

Վարքագծի չափանիշներ. Ծրագրում ներգրավված ամբողջ անձնակազմը, կամավորները և մասնակիցները պարտավոր են՝

A. Հարգել և խթանել յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի եզակի ինքնությունը և զերծ մնալ սեռի, ռասայի, էթնիկ պատկանելության, մշակույթի, կրոնի կամ հաշմանդամության հիմքով խտրականությունից:

B. Հետևել ծրագրի գաղտնիության քաղաքականությանը, որոնք վերաբերում են երեխաների, ընտանիքների և անձնակազմի այլ անդամների վերաբերյալ տեղեկատվությանը:

C. Ոչ մի երեխայի մենակ կամ առանց հսկողության չթողնել, երբ երեխան գտնվում է նրանց խնամքի տակ:

D. Օգտագործել երեխաներին ուղղորդելու դրական մեթոդներ և չներգրավել մարմնական պատիժ, էմոցիոնալ կամ ֆիզիկական բռնություն, նվաստացում. չկիրառել կարգապահական մեթոդներ, որոնք ներառում են մեկուսացում, սնունդը որպես պատիժ կամ պարգև օգտագործելու պրակտիկա, և հիմնական կարիքների մերժում:

E. Անձնական և պրոֆեսիոնալ առումով վարվել այնպես, որ դրականորեն անդրադառնա ծրագրի հեղինակության և երեխաների ու ընտանիքների վրա, որոնց ծառայում է ծրագիրը:

F. Չպահանջել և չընդունել անձնական պարգևներ, նպաստներ կամ դրամական արժեք ունեցող որևէ բան կապալառուներից կամ պոտենցիալ կապալառուներից, եթե նրանք ներգրավված են պայմանագրերի կամ այլ ֆինանսական պարգևների շնորհման և կառավարման մեջ:

CCRC Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագիրը չի հանդուրժի աշխատակիցների, ծնողների, կամավորների, այլ մասնակիցների կամ ծրագրում ներգրավված որևէ մեկի այնպիսի վարքագիծ, որը կխախտի Վարքագծի կանոնների դրույթները: Եթե մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագրի անձնակազմը ականատես լինի խախտման դեպքի, ապա նրանք, եթե պրակտիկորեն հնարավոր լինի և եթե չլինեն անվտանգության խնդիրներ, առանձին կխոսեն անձի հետ: Եթե վտանգված լինի երեխաների կամ անձնակազմի անվտանգությունը, աշխատակիցները կկանչեն ոստիկանություն: Ծրագրի կողմից խախտման վերաբերյալ արձագանքները կտրամադրվեն Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագրի տնօրենի կողմից:

Վարքագծի կանոնների խախտումների օրինակները ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Երեխաներին, ծնողներին կամ անձնակազմին սպառնալը,
- Երեխային ֆիզիկապես կամ բառերով պատժելը,
- Հայհոյելը կամ անիծելը,
- Ծխելը,
- Վիճելը, բառակռիվ անելը, բարձր բղավելը և զայրույթի դրսևորումները,
- Ծրագրի կենտրոններ կամ միջոցառումներին թմրանյութեր, ալկոհոլ կամ զենք բերելը,
- Ֆիզիկական բռնությունը,
- Մեծահասակների միջև ֆիզիկական մտերմության անհամապատասխան կամ չափազանց մեծ դրսևորումը,
- Անհամապատասխան հանդերձանքը, ներառյալ, օրինակ, ցածր կտրվածքով վերնաշապիկը, մերկ միջնամասը կամ փոքր երեխաներին անհարիր բառերով կամ նկարներով հագուստ կրելը,
- Ոչ-պատշաճ բառապաշարը կամ սեռական սիրախոսությունները:

Եթե ծնողը խախտում է Վարքագծի կանոնները, CCRC Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության ծրագիրն իրավունք է վերապահում.

- Սահմանափակել նրա համար ծրագրի երեխաների, դասասենյակների և գործունեության հասանելիությունը,
- Դադարեցնել երեխայի գրանցումը,
- Հեռացնել երեխայի անունը սպասողների ցուցակից,
- Կապվել Երեխաների և ընտանիքի ծառայությունների բաժնի (DCFS) հետ,
- Կապվել ոստիկանության հետ,
- Սկսել քաղաքացիական կամ քրեական պատասխանատվության գործ:

Ուսումնական տարվա օրացույց

Ուսումնական տարին կտարբերվի ըստ ծրագրի տարբերակի: Խնդրում ենք տեսնել ստորև՝ Ձեր ծրագրի գործունեության կոնկրետ ամիսները.

- Երեխայի խնամքի գործընկերություն (CCP)՝ Հուլիսից հունիս
- Երեխաների ընտանեկան խնամքի տանը կրթական ցանց (FCCHEN)՝ Հուլիսից հունիս
- Վաղ խնամքի և ուսուցման ծրագիր տանը՝ Հուլիսից հունիս
- Համակցված ծրագիր տանը՝ Օգոստոսից հունիս
- Ամբողջ օր կենտրոնում՝ Օգոստոսից հունիս
- Ամբողջ օր նորածին/մանուկ կենտրոնում՝ Օգոստոսից մայիս
- Երեխայի խնամքի և զարգացման ծրագիր՝ Նորածնի/մանկան խնամք (CCTR)՝ Կլոր տարի
- Head Start/Կալիֆորնիայի նահանգային նախադպրոցական ծրագիր (CSPP) համակցված՝ Օգոստոսից հունիս

Ծրագրի արձակուրդներ և սաների ազատ օրեր

CCRC Վաղ մանկակության շրջանում խնամքի և կրթության ծրագիրը փակ կլինի հետևյալ տոն օրերին.

- Վետերանների օր
- Գոհաբանության օր և Գոհաբանության օրվա հաջորդ օր
- Ձմեռային արձակուրդ
- Մարտին Լյութեր Քինգի ծննդյան օր
- Նախագահի օր
- Հիշատակի օր
- Գարնանային արձակուրդ (1 շաբաթ)
- Հուլիսի 4
- Աշխատանքի օր

Կլինեն նաև մի քանի դասերից ազատ օրեր, երբ երեխաները դպրոց չեն հաճախի: Օրերի ցանկը Ձեզ կտրամադրվի Ձեր հաճախման կենտրոնում:

Կրթական ծառայությունները

Կրթական փիլիսոփայությունը

CCRC-ի Վաղ մանկակության շրջանում խնամքի և կրթության ծրագիրը նախատեսված է յուրաքանչյուր երեխայի հետաքրքրությունը անհատականացնելով բավարարել յուրաքանչյուր երեխայի կարիքները և խրախուսում է երեխաներին սովորել պրակտիկ գործողություններից:

Կրթական ուսումնական պլանի գործողությունները խրախուսում են երեխաներին առաջադիմել հաղորդակցման հմտությունների, ինտելեկտուալ զարգացման, սոցիալական և հուզական զարգացման, ֆիզիկական զարգացման, ստեղծագործական արտահայտման և ինքնագնահատականի մեջ:

Երեխաները ծրագրի շրջանակներում միմյանց և մեծահասակների հետ շփվելու ամենօրյա հնարավորություններ կունենան: Մեծահասակների, ներառյալ ծնողների և անձնակազմի դերն է երեխաներին աջակցել ու առաջնորդել իրենց ուսումնական արկածների և փորձառությունների միջոցով:

Կոնկրետ փորձառության մեջ ներդրվում են հասկացություններ և հմտություններ, որոնք զարգացման համար պատշաճ են: Ծրագիրը նախատեսված է բավարարել երեխաների ֆիզիկական զարգացման, առողջության պահանջները, համապատասխանել ուսուցման մոտեցումներին, լեզվին, գրագիտությանը, ճանաչողությանը, ընդհանուր գիտելիքներին և սոցիալական հուզական զարգացմանը, որոնք համահունչ են դպրոցին նախապատրաստման նպատակներին: Թեև ծրագրի տարբերակներն ու դասասենյակները տարբերվում են միմյանցից, սակայն կենտրոնի բոլոր սաները մասնակցում են սենյակային և բացօթյա փորձառություններին և ծանոթանում արվեստին, գիտությանը, երաժշտությանը, դրամատիկ դերախաղին, զգայական հետազոտություններին, գրքերին և խմբակային նախագծերին:

Երեխաներին խրախուսվում է արտահայտել իրենց զգացմունքները և զարգացնել ինքնավստահություն և ուրիշների հետ լավ հարաբերություններ հաստատելու կարողություն: Պաշտոնական գնահատումները, երեխաների վարքագծի կանոնավոր դիտարկումները և գրանցումներն առանցքային են ուսումնական ծրագրի պլանավորման համար: Ուստի ուսուցիչները հանդիպում են ծնողների և Վաղ մանկակության շրջանում խնամքի և կրթության ծրագրի անձնակազմի հետ՝ գնահատելու արդյունքները և պլանավորելու յուրաքանչյուր երեխայի նպատակները: Անձնակազմն աշխատում է ծնողների հետ կոնֆերանսների, տնային այցելությունների և ամենօրյա հաղորդակցության միջոցով՝ քննարկելու երեխայի առաջընթացը և այն, թե ինչ կարող են անել ծնողները տանը՝ օգնելու իրենց երեխային հասնել այդ նպատակներին: Ծնողները խրախուսվում են մասնակցել կրթական ծրագրին՝ կամավոր աշխատելով դասարանում և օգնելով անձնակազմին պլանավորման նիստերի ընթացքում:

Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության Տանն իրականացվող ծրագիր

Տնային ծրագիրը նախատեսված է օգնելու ծնողներին զարգացնել իրենց ծնողական հմտություններն ու վստահությունը և օգտագործել իրենց տունը որպես իրենց երեխաների համար ուսումնական միջավայր: Տանն իրականացվող ծրագիրը հասանելի է նաև հղիներին և օգնում է նրանց նախածննդյան կրթություն ստանալու հարցում և աջակցում է նախածննդյան առողջությանը: Ընտանիքի մյուս անդամները կարող են մասնակցել տնային այցին: Ծրագրի նպատակներն են նպաստել փոքր երեխաների զարգացմանը և նպաստել առողջ ընտանիքի բարեկեցությանը:

Տանն իրականացվող ծրագրի ուսումնական պլան

Վաղ մանկակության շրջանում խնամքի և կրթության տանն իրականացվող ծրագիրը օգտագործում է «Ծնողներ որպես ուսուցիչներ» (PAT) ուսումնական ծրագիրը՝ տնային այցելություններն ավարտելու համար: Այն օգտագործվում է Տանն աշխատող մանկավարժների կողմից մշակութային առումով զգայուն ձևերով ծառայություններ մատուցելու համար, որոնք ընդգծում են ծնող-երեխա փոխազդեցությունները, զարգացման վրա հիմնված ծնողությունը և ընտանիքի բարեկեցությունը: «Ծնողներ որպես ուսուցիչ» ծրագրի նպատակներն են բարձրացնել ծնողների գիտելիքները վաղ մանկության զարգացման վերաբերյալ և բարելավել դաստիարակության գործելակերպը, ապահովել զարգացման հետաձգումների և առողջական խնդիրների վաղ հայտնաբերումը, կանխել երեխաների չարաշահումը և անտեսումը և բարձրացնել երեխաների՝ դպրոցին պատրաստվածությունը և դպրոցական հաջողությունը:

Տանն իրականացվող ծրագրի տնային այցեր

Ծրագիրը ներառում է շաբաթական մեկուկես ժամ տնային այցելություն: Առաջին տուն այցելության ժամանակ ընտանիքը և տնային ուսուցիչը որոշում են տնային այցելությունների կանոնավոր օրը և ժամը, որը լավագույնս համապատասխանում է ընտանիքի կարիքներին: Խնդրում ենք ծանոթանալ «Տնային այցելության տարրեր» թերթիկին:

Տանն իրականացվող ծրագրի սոցիալականացման բաղադրիչ

Վաղ մանկակության շրջանում խնամքի և կրթության տանն իրականացվող ծրագիրն առաջարկում է ամսական 1-2 խմբային սոցիալականացում՝ ընտանիքի և նրանց երեխայի համար այլ ծնողների և երեխաների հետ շփվելու հնարավորություններ ստեղծելու միջոցով: Սոցիալականացումները թույլ են տալիս ընտանիքներին կիսվել փորձով, հետաքրքրություններով և գործունեությամբ այլ ծնողների հետ: Սոցիալականացումը կօգնի նաև ամրապնդել ծնողի և երեխայի հարաբերությունները:

Ի՞նչ ակնկալել խմբային սոցիալականացման ժամանակ. Խնդրում ենք ծանոթանալ «Սոցիալականացման ուղեցույցներ» թերթիկին:

BLUEY

Երեխայի խնամքի գործընկերության (CCP) տարբերակ

CCP-ն համագործակցում է Ընտանիքում երեխաների խնամքի մատակարարների հետ Սան Ֆերնանդո հովտում և Անտելոպյան հովտում՝ բարձրորակ վաղ ուսուցում և համապարփակ ծառայություններ առաջարկելու նպատակով: CCP-ն տրամադրում է շուրջօրյա տարեկան ծառայություններ իրավասու ընտանիքներին՝ սպասարկելով 0-3 տարեկան երեխաներին երեխաների խնամքի հաստատություններում և 0-5 տարեկան երեխաներին ընտանեկան խնամքի տներում՝ ապահովելով նրանց համար համապարփակ ծառայությունների հասանելիություն, ապահով, դաստիարակող ուսումնական միջավայրեր, աջակցություն երեխաների զարգացմանը, ընտանեկան նպատակներին հասնելուն, սննդի ապահովմանը՝ Երեխաների և մեծահասակների խնամքի սննդի ծրագրի միջոցով, ինչպես նաև տակդիրներ:

Նշում. CCP հաստատության ժամերը և հաստատության աշխատանքային օրացույցը կտրամադրվեն ընտանիքներին գրանցման գործընթացում:

CCP տարբերակով իրականացվող ծրագրի ուսումնական պլան

Ընտանիքում երեխաների խնամքի ստեղծագործական ուսումնական ծրագիր

Ստեղծագործական ուսումնական ծրագիր նորածինների, մանուկների և երկու տարեկանների համար

CCP-ն իրականացնում է Ստեղծագործական ուսումնական ծրագիր՝ հետազոտության վրա հիմնված ուսումնական ծրագիր, որը խթանում է բարձրորակ սենյակային և բացօթյա միջավայրեր, որոնք արձագանքում են յուրաքանչյուր երեխայի կարիքներին: Ընտանիքին ուղղված միջոցառումների ապահովում, որոնք նվիրված են երեխայի երկու ամենակարևոր աշխարհների՝ դպրոցի և տան միջև կապեր հաստատելուն: CCP մատակարարներն ուշադիր պլանավորում են գործողություններ, որոնք համահունչ են երեխաների շահերին՝ ապահովելով, որ բոլոր երեխաները մասնակցեն ուսուցման փորձառություններին, որոնք նպաստում են.

- Ինքնակարգավորմանը
- Դրական հարաբերությունների հաստատմանը և պահպանմանը
- Համագործակցային մասնակցությանը որպես խմբի անդամներ
- Կրթության դրական մոտեցումների ձևավորմանը

CCP տարբերակով իրականացվող ծրագրի մարզիչի աջակցություն

Մատակարարների համար	Ընտանիքների համար
CCP մարզիչը նշանակված է աջակցելու մատակարարներին՝ շարունակաբար բարելավելու իրենց ծառայությունների որակը տեղում շարունակական մարզչական նիստերի և մասնագիտականզարգացման դասընթացների միջոցով: Շարունակական աջակցություն ուղղված՝ • Դասի պլանավորմանը • Երեխաների գնահատմանը • Դիտարկումներին • Երեխայի անհատականացված նպատակներին • Երեխա-ուսուցիչ փոխազդեցությանը • Առողջապահական և անվտանգ միջավայրերն • Համայնքային խնամքի լիցենզավորման համապատասխանությանը	CCP մարզիչն աջակցում է երեխաներին և ընտանիքներին՝ շարունակական համապարփակ ծառայություններ մատուցելով: Սա ներառում է խնամակալների ներգրավվածության խթանումը՝ համագործակցություններ ստեղծելով CCP-ի անձնակազմի/մատակարարողների հետ՝ զարգացնելու կրթական գործունեություն, որը կարող է իրականացվել տանը և երեխաների խնամքի պայմաններում: CCP-ի անձնակազմը/մատակարարները և խնամակալները երեխաների համար ստեղծում են կրթական նպատակներ պլանավորված տնային այցելությունների և ծնող-ուսուցչ հանդիպումների ժամանակ, որտեղ նրանք կարող են քննարկել երեխայի առաջընթացը, գնահատման արդյունքները և կարիքները:

Երեխաների ընտանեկան խնամքի տանը կրթական ցանցի (FCCHEN) տարբերակ

FCCHEN ծրագիրը համագործակցում է Սան Ֆերնանդո հովտում, Անթելոպայի հովտում և Սան Բերնարդինոյի ընտանեկան խնամքի մատակարարների հետ, որոնք համապատասխանում են Համայնքային խնամքի լիցենզավորման կանոններին: Այս մատակարարներն առաջարկում են երեխաների խնամքի ծառայություններ 0-ից 13 տարեկան երեխաների համար, ովքեր ստանում են սուբսիդավորվող երեխայի խնամք CCRC-ի միջոցով: Ծրագիրը նպատակ ունի ապահովելու, որ ցածր եկամուտ ունեցող ընտանիքները կարողանան օգտվել երեխաների բարձրորակ խնամքից, մինչ նրանք աշխատում են, հաճախում են դպրոց կամ վերապատրաստում են անցնում: Երեխաները զբաղվում են տարիքին համապատասխան զբաղմունքով և օգուտներ քաղում անձնակազմի հետ փոխգործակցությունից: FCCHEN մատակարարները սերտորեն համագործակցում են ծնողների հետ՝ ստեղծելու աջակցող հարաբերություններ, որոնք նպաստում են երեխայի զարգացմանը:

FCCHEN ծրագրին մասնակցել ցանկացող ընտանիքների որակավորումներ

- Համապատասխանում են Եկամուտի իրավասության պահանջներին CCRC Child Care Financial Assistance (CCFA) թիմի միջոցով:
- Ընտրում են մատակարար Երեխաների ընտանեկան խնամքի կրթական ցանցում
- Պահպանում են իրավասությունը Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների վարչության ուղեցույցների համաձայն

FCCHEN ծրագիրն առաջարկում է

- Աջակցություն Մասնագիտական զարգացման մարզչի կողմից FCCHEN Երեխաների խնամքի հաստատությունների համար:
- Աջակցություն անհատական ուսումնական գործունեության պլանավորմանը՝ երեխայի զարգացման կարիքները բավարարելու համար:
- Մասնագիտական զարգացման և աճի հնարավորություններ
- Երեխաների գնահատումներ, որոնք հիմնված են դիտարկումների և ծնողների կոնֆերանսների վրա՝ ապահովելու համար անհատական հանգուցային կետերի իրականացումը:
- Շրջակա միջավայրի շարունակական գնահատումներ՝ օգտագործելով FCCERS գործիքը

Տանն անցկացվող համակցված տարբերակ

Տանն անցկացվող համակցված ծրագիրը կներառի անհատական այցեր առանձին ընտանիքների հետ, ինչպես նաև երեխաների համար՝ ամիսը երկու անգամ անհատական լսարան: Այն ուսուցիչները, որոնց հետ աշխատում եք «Տանն անցկացվող համակցված»-ի ընթացքում, կլինեն նույն ուսուցիչները, ում հետ դուք աշխատում եք դասարանում: Այս ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Աջակցել ընտանիքի նպատակների պլանավորմանը և դրանց հասնելու գործում,
- Օգնել ընտանիքներին օգտվել շարունակական առողջապահությունից ամբողջ ընտանիքի համար,
- Խթանել անվտանգ վարքագիծ տանը և համայնքում,
- Աշխատել միասին ստեղծելու գործողություններ, որոնք դուք կարող եք իրականացնել Ձեր երեխայի հետ:
- Ձեզ տրամադրել համայնքի ռեսուրսների մասին տեղեկատվություն,
- Առաջարկել տեղեկատվական սեմինարներ և սոցիալականացման խմբեր:

Ուսումնական ծրագրեր, որոնք օգտագործվում են մեր Տանն անցկացվող համակցված տարբերակում

Տանն իրականացվող համակցված տարբերակն օգտագործում է «Ծնողը որպես ուսուցիչ» (PAT) ուսումնական ծրագիրը տնային այցելությունների ժամանակ, իսկ ստեղծագործական ուսումնական պլանը՝ դասարանում գտնվելու ժամանակ:

«Ծնողը որպես ուսուցիչ» PAT

Տնային այցելությունների ժամանակ Տնային պայմաններում աշխատող մանկավարժներն օգտագործում են PAT հիմնարար ուսումնական ծրագիրը մշակութային առումով զգայուն ձևերով ծառայություններ մատուցելու համար, որոնք ընդգծում են ծնող-երեխա փոխազդեցությունը, զարգացումը կենտրոնացած ծնողությունը և ընտանիքի բարեկեցությունը: «Ծնողներ որպես ուսուցիչ» ծրագրի նպատակներն են բարձրացնել ծնողների գիտելիքները վաղ մանկության զարգացման վերաբերյալ և բարելավել դաստիարակության գործելակերպը, ապահովել զարգացման հետաձգումների և առողջական խնդիրների վաղ հայտնաբերումը, կանխել երեխաների չարաշահումը և անտեսումը և բարձրացնել երեխաների՝ դպրոցին պատրաստվածությունը և դպրոցական հաջողությունը:

Ստեղծագործական ուսումնական ծրագիր

Ստեղծագործական ուսումնական ծրագիրը շրջակա միջավայրի վրա հիմնված ուսումնական ծրագիր է, որը խրախուսում է երեխաներին սովորել պրակտիկ գործողություններից: Ստեղծագործական ուսումնական ծրագիրն առաջարկում է ուսումնասիրություններ, որոնք ներկայացված են գործնական, նախագծերի վրա հիմնված հետազոտությունների միջոցով:

Ստեղծագործական ուսումնական ծրագիր նորածինների/մանուկների համար. Նորածնի-մանկան ուսումնական ծրագիր 0-ից 2 տարեկանների համար - Ստեղծագործական ուսումնական ծրագիր (teachingstrategies.com)

Ստեղծագործական ուսումնական ծրագիր նախադպրոցական տարիքի համար. Նախադպրոցական ուսումնական ծրագիր 3-ից 5 տարեկանների համար. Ստեղծագործական ուսումնական ծրագիր (teachingstrategies.com)

Որպես Ստեղծագործական ուսումնական ծրագրի լրացուցիչ ռեսուրս, CCRC-ն գործի է դնում նաև Երկրորդ քայլը: Երկրորդ քայլը ծրագիր է, որը նախատեսված է խթանելու սոցիալական և զգացմունքային ուսուցումը: secondstep.org:

Տնային այցելություններ

Ծրագիրը ներառում է շաբաթական մեկ անգամյա տնային այցելություն առնվազն 90 րոպե տևողությամբ տնային պայմաններում դասավանդման վերապատրաստված դաստիարակի կողմից: Առաջին տնային այցելության ժամանակ Դուք և տնային ուսուցիչը կորոշեք տնային այցելությունների կանոնավոր օրը և ժամը, որը լավագույնս համապատասխանում է Ձեր ընտանիքի կարիքներին: Այցելությունների ընթացքում տեղի կունենան հետևյալը .

- Քննարկում շաբաթվա ընթացքում տեղի ունեցածի մասին:
- Շաբաթվա գործունեության պլանների վերանայում:
- Գործունեության իրականացում, որի ուշադրության կենտրոնում է Ձեր երեխայի զարգացումը:
- Քննարկում, թե ինչպես ընթացան գործերը:
- Ծրագրի կամ համայնքի գործունեության մասին տեղեկատվության փոխանակում:
- Հաջորդ տուն այցելության պլանների կազմում:
- Մտորում և քննարկում դասարանում փոխազդեցությունները և զարգացման մասին:
- Աշխատակազմը կանցկացնի երկու ծնողների համաժողով տնային այցելությունների ժամանակ:

Անձամբ լսարանային դասընթաց

- Երեխաները կմասնակցեն անձամբ լսարանային դասընթացներին ամիսը երկու անգամ:
- Տանն անցկացվող համակցված տարբերակը առաջարկում է 3,5 ժամ ամիսը երկու անգամ, որը բաղկացած է ուսումնական ժամից և զբաղմունքներից, ճաշից (նախաճաշ և ճաշ առավորյան դասերի համար և Ճաշ և խորտիկ երեկոյանդասերի համար) և բացօթյա ժամերից:

Խնդրում ենք հղում կատարել էջ 16-ից սկսվող Կենտրոնում անցկացվող տարբերակին, որը վերաբերում է՝

- Սահմանված ռեժիմին
- Դասի պլանին
- Կարգապահության քաղաքականությանը
- Ձուգարանից օգտվելու հմտություններին
- Տակդիրներին
- Տոներին

Կենտրոնում անցկացվող տարբերակ

CCRC վաղ կրթության կենտրոնը (EECB) ունի տարբեր կենտրոններ Սան Ֆերնանդոյի և Անտելոպայի հովիտներում, որոնք առաջարկում են 0-5 տարեկան երեխաների համար ամբողջական ցերեկային խնամք: Ծրագրի տարբերակները բաղկացած են հետևյալից՝

Head Start/CSPP ծրագրեր

- Առաջարկվող ժամեր՝ 8 կամ 10 ժամ
- Ուսման ժամանակ,
- Սննդի ժամ (նախաճաշ, ճաշ, խորտիկ),
- Հանգստի շրջան և բացօթյա ժամանակ:

Վաղ Head Start/CCTR ծրագրեր

- Առաջարկվող ժամեր՝ 9 կամ 10.5 ժամ
- բացօթյա և սենյակային զարգացման համար նպաստավոր փորձառություններ
- Մանուկների սննդի ժամերը ներառում են նախաճաշ/ճաշ և խորտիկներ, իսկ նորածինների կերակրման ժամերը՝ ըստ անհրաժեշտության:

Մենք ունենք բարձր որակավորում ունեցող ուսուցիչներ, ընտանիքի փաստաբաններ և կենտրոնների տնօրեններ, ովքեր սերտորեն համագործակցում են յուրաքանչյուր կենտրոնում գտնվող ընտանիքների հետ: Մենք ձգտում ենք ստեղծել ջերմ և հյուրընկալ միջավայր մեր յուրաքանչյուր կենտրոնում, որպեսզի ընտանիքները վստահ զգան իրենց երեխաներին մեր խնամքի տակ թողնելու հարցում: Մեր դասարաններում նույնպես միջավայրը ջերմ է և հյուրընկալ, ինչպես նաև ներառական՝ յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքները բավարարելու համար:

Կենտրոնում անցկացվող ուսումնական ծրագիր

Ստեղծագործական ուսումնական ծրագիրը շրջակա միջավայրի վրա հիմնված ուսումնական ծրագիր է, որը խրախուսում է երեխաներին սովորել պրակտիկ գործողություններից: Ստեղծագործական ուսումնական ծրագիրն առաջարկում է ուսումնասիրություններ, որոնք ներկայացված են գործնական, նախագծերի վրա հիմնված հետազոտությունների միջոցով:

Ստեղծագործական ուսումնական ծրագիր նորածինների/մանուկների համար. Նորածնի-մանկան ուսումնական ծրագիր 0-ից 2 տարեկանների համար - Ստեղծագործական ուսումնական ծրագիր (teachingstrategies.com)

Ստեղծագործական ուսումնական ծրագիր նախադպրոցական տարիքի համար. Նախադպրոցական ուսումնական ծրագիր 3-5 տարեկանների համար - Ստեղծագործական ուսումնական ծրագիր (teachingstrategies.com)

Որպես Ստեղծագործական ուսումնական ծրագրի լրացուցիչ ռեսուրս, CCRC-ն գործի է դնում նաև Երկրորդ քայլը: Երկրորդ քայլը ծրագիր է, որը նախատեսված է խթանելու սոցիալական և զգացմունքային ուսուցումը: secondstep.org:

Ուսուցման բացօթյա և սենյակային միջավայրեր

Մենք օգտագործում ենք մեր բացօթյա և սենյակային միջավայրեր որպես երրորդ ուսուցիչ: Ուսուցման բացօթյա և սենյակային միջավայրերը, առանցքային դեր են խաղում մեր դասավանդման մոտեցման մեջ: Երեխաները զարգանում են միջավայրում, որը համապատասխանում է նրանց հետաքրքրություններին և զարգացման փուլերին:

Մեր բացօթյա միջավայրը երեխաներին զարգացնում է մի շարք հմտություններ.

Խթանում է ուսումնառությունն ինքնանախաձեռնման և անձնական պատասխանատվության միջոցով:

- Ձեռք է բերում սոցիալական/հուզական վարպետություն և զարգացնում հաղորդակցման հմտություններ նախագծերի և խմբային գործունեության միջոցով:
- Ստեղծում է հաջող ուսումնական միջավայր ակտիվ սովորողի համար:
- Նպաստում է առողջական դրական արդյունքներին՝ հաստատելով շարունակական, եռանդուն և երկարատև ֆիզիկական գործունեության օրինաչափություն:
- Զարգացնում է «հրաշքի» զգացումը և տալիս է «ինչ կլիներ, եթե»-ի հնարավորություն:

Մենք հավատում ենք, որ երեխաները ակտիվ սովորողներ են: Նրանք օգտագործում են իրենց ամբողջ մարմինը՝ ուսումնասիրելու, փորձարկելու և խնդիրներ լուծելու համար:

Մենք հավատում ենք, որ երեխաները պետք է փորձեն դժվարին սարքավորումներ և գործողություններ, որոնք կխթանեն հաջողության, անվտանգության և զվարճանքի զգացումը:

Մենք հավատում ենք, որ երեխայի զարգացումն օպտիմիզացված է, երբ նա զգալի ժամանակ է հատկացնում երեխայի նախաձեռնությամբ ուսուցչի աջակցությամբ իրականացվող միջոցառումներին մասնակցելու համար:

Առօրյա գործողություններ

Ամենօրյա ռեժիմ.

Առօրյան օգնում է Ձեր երեխային իրեն ապահով զգալ և անկախություն ձեռք բերել: Երեխաներին խրախուսվում է հեշտությամբ և վստահորեն անցնել մի գործունեությունից մյուսը:

Նորածինների և մանուկների համար սովորական օրը կարող է բաղկացած լինել հետևյալից.

- Բարևներ, հրաժեշտներ, տակդիրներ և զուգարանից օգտվելը:
- Ընտանեկան կերակուրներ, երբ նրանք մտնեն իրենց մանուկ տարիքին հաջորդող տարիներ
- Քնի և հանգստի ժամանակ
- Մաքրություն
- Պատմվածքի ընթերցման/երաժշտության ժամանակ
- Բացօթյա զբաղմունք
- Բերանի խոռոչի հիգիենա
- Շաբաթական զբոսանք համայնքի բնության գրկում
- Երեխայի/աշխատակազմի նախաձեռնությամբ զբաղմունք և փորձ
- Խմբային ժամանակ (փոքր և մեծ խմբեր)
- Ընտանեկան ճաշեր
- Հանգստի շրջան

Հագուստ

Ձեր երեխան ակտիվ կլինի դասարանային գործունեության ընթացքում և պետք է հագնի հարմարավետ և լվացվող հագուստ: Ձեր երեխային բերեք ապահով կոշիկներով, օրինակ՝ փակ մատներով կոշիկներով, որը խաղի ժամանակն ապահով կդարձնի և թույլ կտա նրան պատրաստ լինել աշխարհը ճամաչելուն և խաղալուն: Թեև մենք երբեմն թույլ ենք տալիս լինել բոկոտն, սակայն մենք պնդում ենք, որ ապահով կոշիկներ պետք է ունենալ հատուկ գործողությունների, օրինակ՝ հեծանիվ վարելու համար:

Մենք խրախուսում ենք նորածնային և մանուկ հասակում բոկոտն լինելը, քանի որ ինչպես գիտենք, այն նպաստում է ուղեղի և մկանների մեծանալուն զարգացմանը: Նորածինների և մանուկների պարագայում, երբ նրանք սովորում են շարժել իրենց մարմինը, որը կարող է ներառել չոչը և քայլ գցելը, կոշիկ կրելը կարող է ազդել մկանների օգտագործման վրա և պատճառ դառնալ, որ այս նոր հմտությունների ուսուցումն ավելի դժվար և հիասթափեցնող լինի: Հետևաբար, մենք խրախուսում ենք մեր նորածիններին և մանուկներին երեխաների դասարաններում լինել բոկոտն:

Երբեմն միջոցառումների ընթացքում երեխաները կօգտագործեն իրենց բոլոր զգայարաններն աշխարհը ճանաչելու համար, և մենք ցանկանում ենք գնահատել նրանց փորձառությունները՝ ապահովելով անկաշկանդ լինելը, ինչպես տանը: Յուրաքանչյուր ընտանիք կարող է կենտրոնում թողնել փակ կոշիկներ, եթե ընտանիքը չի կարող ձեռք բերել փակ կոշիկներ, ապա Ընտանիքի փաստաբանը կօգնի ձեռք բերել մի զույգ: Երեխաները տուն չեն վերադարձվի, եթե նրանք փակ կոշիկներ չեն կրում, սակայն անվտանգության նկատառումներից ելնելով ուսուցչական թիմը կարող է սահմանափակել օրվա գործողությունները:

Համոզվեք, որ Ձեր երեխայի հագուստը եղանակին համապատասխան եք ընտրել՝ հագցնելով նրան շերտերով, որպեսզի նա կարողանա շերտերը պակասեցնել, երբ տաք է, կամ շերտեր ավելացնել, եթե ցուրտ է: Բաճկոնների և սվիտերների վրա պետք է լինեն պիտակներ՝ Ձեր երեխայի անունով: Ծնողներից կպահանջվի լրացուցիչ հագուստ բերել, այդ դեպքերի համար, եթե հագուստին հեղուկ թափվի կամ չնախատեսված իրավիճակ լինի:

Դասի պլաններ

Նորածիններ և մանուկներ



Plan of Possibilities
Group Planning Form for Infants and Toddlers

Teachers:	**Maria, Rosita, Pepita**
Classroom:	**Class/01**
Week of:	**9/25-29/23**

DOT:

"How do I explore and participate in gross motor experiences?"

Changes to the environment:
Adding tape on floor for children to jump and do different physical movements.

Changes to routines or Schedules:
Open schedule to support and accommodate children's needs.

Family Involvement:
Families will participate with gross motor activities outside school and will continue participating doing the first diaper change during drop off.

Special experiences I plan to offer this week					
	Monday	**Tuesday**	**Wednesday**	**Thursday**	**Friday**
Indoor Experiences	1,2,3 Hops P-13 By jumping, children demonstrate traveling skills and develop gross motor skills. Book: Hello Highlights #9	Stand Up and Dance P-27 While dancing and moving together, children develop social and physical skills. MM-32 Jump and Twirl	Food Activity Sunflower and Jelly Tacos Performing food activities help children to explore, science, nutrition, health and language. MM- T Dance	Tape Trails P-28 Placing masking tape on the floor, creates a trail for children to follow and move, which help them to build gross motor and balancing.	Roll It to Me! P.-18 Rolling balls, allow children to socialize and taking turns rolling back and forth as well as following directions. MM-89 Hop Around
Outdoor Experiences	Throwing Plush Balls P-04 Throwing balls help children to strength their abilities and develops gross motor	Follow the Leader P-34 Following leader's movement, help children to control their bodies as	Balancing Act P-33 Balancing, challenge children and help to move in different ways as they develop their skills.	Run and Walk Together LG-98 Becoming aware of body movements is important for children to move and how	Balance on a Beam P-09 Practicing balance is essential as children growth and develop and helps to

Նախադպրոցական



CCRC Head Start Indoor/Outdoor Group Lesson Plan

Teachers: _____ **Class:** ____ **Week of:** _____ **Study** (insert topic) **Q: Second Step as Needed**

Question of the week: What colors do I see in nature?

Homework: Take a 15 walk around your neighborhood and see if you can find any insects. Please share pictures via Learning Genie

	Monday 5/20/24	Tuesday 5/21/24	Wednesday 5/22/24	Thursday 5/23/24	Friday 5/24/24
Creative Experiences (individualized experiences) includes small group.	**Small Group:** **Topic:** Walking a Name Caterpillar Materials: paper/colored circles **Option 1:** Picture Frames (I.T.C MM1) Materials: photos **QOD:** What is this, picture of? (Display an extreme close-up picture of an insect or event, leg, wings, etc) Large Group: Discussion and Shared Writing: Identifying the insects in our Community. Materials: **"MM"** 109: Silly Dance **Q: As Needed**	**Small Group:** **Topic:** Leaf Painting Materials: tan color trays/water color **Option 1:** Straw Shapes (I.T.C MM2) Materials: pipe cleaners **QOD:** Where should we look for insects today? Large Group: Discussion and shared Writing: Looking for Insects **"MM** 174 **"Creeping and Jump"** **Q: Second Step as Needed**	**Small Group:** **Topic:** Creatures **WITC** Materials: colored circles **Option 2:** Same Sort: Round (I.T.C 1L12) Materials: variety of objects **QOD:** What is the weather like today? Large Group: Discussion and shared writing: Do we see different insects at different times? Materials: **"MM"**14, "I'm Thinking Of…" **"MM** 174", Happy Molly	**Small Group:** **Topic:** Pizzy Dinosaur **Tap:** Materials: baking soda/water color **Option 2:** Observing Insect (FR (T.C L1.7E) Materials: photos of insects **QOD:** What colors do you see on this insect? Large Group: Discussion and shared writing: Where have we seen insects? **"MM** "57 , "Little Ball"	**Small Group:** **Topic:** Making Lady Bugs Materials: red/black paint **Option 2:** Author & Illustrator (I.T.C L1.6R) Materials: **QOD:** Which weighs more? Large Group: Discussion and shared writing-biggest and smallest insects **"MM** "140 , " Action Counting".
	Q: Second Step as Needed		**Q: Second Step as Needed**	**Q: Second Step as Needed**	**Q: Second Step as Needed**

Մանկապարտեզի նախադպրոցական դասընթացի դասի պլանների օրինակ

Ծնողները հրավիրվում են ուսուցիչների հետ մասնակցելու շաբաթական դասապլանի մշակմանը: Բոլոր դասերի պլաններն ամեն շաբաթ յուրաքանչյուր դասարանում փակցվում են ծնողների տեղեկատախտակի վրա, որպեսզի ծնողները ծանոթանան և առաջարկներ անեն: Ծնողների վերանայման համար յուրաքանչյուր դասարանում փակցված են օրվա ռեժիմը:

- Նախադպրոցական ուսումնական հաստատության դասի պլանների օրինակ

Տնային այցեր և ծնող-ուսուցիչ հանդիպումներ

Կենտրոնի աշխատակազմը կնշանակի երկու տնային այց ծնողների հետ և երկու ծնող-ուսուցիչ հանդիպում: Առաջին տնային այցը տեղի կունենա աշնանը, իսկ երկրորդ տնային այցը տեղի կունենա գարնանը: Աշխատակազմը կաշխատի ծնողների հետ՝ այցերը պլանավորելու այն ժամանակ, որը կհամապատասխանի ծնողների գրաֆիկներին: Ասպիսի հանդիպումներո օգնում են անձնակազմին և ծնողներին միասին խոսել երեխայի առաջընթացի, գնահատականների և կարիքների մասին: Նրանք միասին աշխատում են մշակելու կրթական գործողությունները, որոնք կարող է իրականացվել ինչպես տանը, այնպես էլ դասարանում:

Կարգապահության քաղաքականություն

Կարգապահությունը երեխաներին համապատասխան վարքագիծ և սահմաններ սովորելու ուղղորդման գործընթաց է: Աշխատակազմը յուրաքանչյուր երեխայի օգնում է սովորել համապատասխան վարքագիծ դրսևորել, անվտանգ օգտագործել նյութերը և երեխաներին ապահով պահել: Սա իրականացվում է ողջամիտ, տարիքային և հետևողական ակնկալիքներ ապահովելով: Մենք գիտակցում ենք, որ ծնողները իրենց երեխաների առաջին դաստիարակներն են, հետևաբար, մենք ողջունում ենք ծնողների գաղափարները՝ օգնելու իրենց երեխային այս ուսուցման գործընթացում:

CCRC-ն կիրառում է հետևյալ դրական կարգապահական հնարքները .

Տեղափոխել երեխային մի տարածքից, որտեղ նրան դժվար է դասասենյակի մեկ այլ տարածք կամ խաղային բակ: Օգնել երեխաներին քննարկել և լուծել խնդիրները:

- Երեխային մեծահասակի կողքին պահելը օգնում է երեխային ձեռք բերել ինքնատիրապետում:
- Տրամադրել երեխաներին ապահով գոտի դասարանում, որպեսզի երեխան ունենա իր տարածքը:
- Գործընկերություն ծնողների հետ՝ անհրաժեշտության դեպքում գործողությունների պլան մշակելու համար:

CCRC <u>չի կիրառում</u> հետևյալ մեթոդները.

- Որևէ տեսակի ֆիզիկական պատիժ:
- Ձրկել սնունդից կամ պարգևատրել սնունդով:
- Մականունով կոչելը, նվաստացնող մեկնաբանություններ, սպառնալիքներ կամ որևէ այլ բանավոր նսեմացնող արտահայտություն:
- Երեխային դասարանից կամ կենտրոնից դուրս հանել կամ վարքագծի դժվարություններով պայմանավորված փոփոխել նրանց դասացուցակը:

Զուգարանից օգտվելը

Զուգարանից օգտվելը զարգացման կարևոր փուլ է և այդ հարցում չի կարելի շտապել: Ծրագրի շրջանակում կենտրոնացնելով ուշադրությունը տակդիրների և զուգարանից օգտվելու ուղղությամբ, մենք պարզել ենք, որ սա կարող է սթրեսային փոփոխություն լինել երեխաների համար: Նրանք ճանաչում են իրենց աճող անկախությունը և զգայուն հավասարակշռությամբ հետևում, թե ինչպես է անկախության այս ցանկությունը ընկալվում ուրիշների կողմից: Խրախուսանքի և առօրյա գործողությունների միջոցով մենք կարող ենք օգնել բացահայտել Ձեր երեխայի պատրաստ լինելու նշանները: Մենք աջակցում և խրախուսում ենք Ձեր երեխայի՝ զուգարանից օգտվել կարողանալու հպարտությամբ պայմանավորված անկախությունը:

Տակդիրները

Ծրագիրը միանգամյա օգտագործման տակդիրներ և անձեռոցիկներ է տրամադրում գրանցված երեխաների համար: Խնդրում ենք Ձեր երեխային բերել մաքուր, չոր տակդիրով կամ փոխեք նրան դասարանում նախքան այդ օրը մուտք գործելը: Նորածինների և մանուկների համար կենտրոնների համար ուսուցման թիմերն ամեն օր շփվելու են ծնողների հետ՝ քննարկելու իրենց երեխայի տակդիրի և կերակրման վերաբերյալ հարցեր՝ օգտագործելով մեր հիմնական հաղորդակցության հարթակը՝ Learning Genie հավելվածը: Բացի այդ, նորածինների և մանուկների պարագայում կենտրոն ժամանելուն պես ծնողները կփոխեն իրենց երեխային: Մեր նախադպրոցական կենտրոններում մեր ուսուցիչները լրացնում են տակդիր փոխելու մատյան, որը հասանելի է ծնողների խնդրանքով և ծնողների հետ համատեղ աշխատում են զուգարանից օգտվել ուսուցանող ծրագրի վրա: Աշխատակիցները Ձեր երեխային տուն կուղարկեն մաքուր, չոր տակդիրով: Տակդիր կրելու ընթացքում մենք հավատարիմ ենք նահանգային լիցենզավորմանը և դաշնային քաղաքականությանն ու ընթացակարգերին՝ պահպանելով առողջության և անվտանգության լավ գործելակերպը: Բացի այդ, մարզման շալվարները տրամադրվում են, երբ Ձեր երեխային մոտ զարգացած են զուգարանակոնքի ուսուցման հմտությունները:

Անձնական իրեր

Յուրաքանչյուր երեխա կունենա պահարան, որտեղ կպահի իր հավելյալ հագուստները, արվեստի գործերը և անձնական իրերը: Խնդրում ենք բոլոր անձնական խաղալիքները, գրքերը թողնել տանը: Սա նվազեցնում է սեփականության հետ կապված խնդիրները: Դաժան, կործանարար խաղ նմանակող խաղալիքները, ինչպիսիք են հրացանները, սուրը, նռնակները կամ դաշույնները, հարմար չեն դպրոցի համար: CCRC-ն պատասխանատվություն չի կրում հագուստի, անձնական իրերի կամ խաղալիքների կորստի համար:

Կայանատեղի և անվտանգություն

Ձեր և երեխաների անվտանգության համար խնդրում ենք հարգել ճանապարհային երթևեկության բոլոր կանոնները, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.

- Դպրոց գնալիս օգտագործեք հետիոտնային անցումներ:
- Խնդրում ենք երեխաներին պահել մայթին:
- Հնազանդվեք ճանապարհային ազդանշաններին:
- Զգուշությամբ մտեք դպրոցի տարածք, հետևեք մեքենաներին:

Զերծ մնացեք կրոնական ուսուցումից

CCRC վաղ խնամքի և ուսուցման ծրագիրը զերծ է կրոնական ուսուցումից կամ քարոզից:

Բաց դռների քաղաքականություն

CCRC Վաղ մանկության շրջանում խնամքի և կրթության կենտրոնն ունի բաց դռների քաղաքականություն, ընտանիքները ողջունվում են ցանկացած պահի, և մենք խրախուսում ենք Ձեզ հնարավորինս շատ մասնակցել ամենօրյա գործունեությանը:

Դպրոցից վերցնելու/Դպրոց բերելու ընթացակարգեր

Ստորև բերված են ընթացակարգեր, որոնց խնամակալները պետք է հետևեն ծրագրի յուրաքանչյուր երեխայի անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու համար:

1. Չափահասը (18 տարեկան և բարձր անձ) պետք է երեխային ուղեկցի դասարան և դուրս գա ամեն օր՝ գրանցլեով և դուրս գրելով:
2. Ժամանումից հետո չափահասը պետք է սպասի, մինչև ընդունող անձնակազմն ավարտի երեխայի առողջության ամենօրյա ստուգումը, որպեսզի համոզվի, որ նա զերծ է հիվանդությունից և/կամ մնասվածքներից:
3. Եթե Ձեր երեխան ներկա չի լինի, խնդրում ենք կապ հաստատել Ձեզ հատկացված կենտրոնի հետ ոչ ուշ, քան ուսումնական օրվա մեկնարկից 15 րոպե անց՝ տեղեկացնելու Ձեր երեխայի բացակայության մասին, բացակայության պատճառի և վերադարձի սպասվող ամսաթվի մասին:
4. Եթե Ձեր երեխան գրանցված է մեր «Տանն իրականացվող» տարբերակում, մենք խնդրում ենք, որ տեղեկացնեք Ձեր տանն աշխատող մանկավարժին, հենց որ պարզ լինի, որ հանդիպումը չի կարող կայանալ:
5. Ձեր կենտրոնին Ձեր երեխայի բացակայության մասին չհայտնելու հետևանքը կլինի այն, որ տուն այցելությունը տեղի կունենա:

Բացակայություններ

Կանոնավոր հաճախելը կարևոր է: Հետևողական հաճախումների միջոցով երեխաները և ընտանիքները կարող են առավելագույնս օգտվել Head Start ծառայություններից. երեխաները սովորում են դպրոցում լինելու կարևորությունն ու արժեքը և վաղաժամ զարգացնում պատասխանատվությունը: Ակնկալվում է, որ երեխաները կպահպանեն նվազագույնը 85% կամ ավելի բարձր միջին ամսական հաճախում:

- Երեխաները, որոնց հաճախելիությունը 85%-ից ցածր է, կունենան գործողությունների ծրագիր, որը կմշակվի ընտանիքին աջակցելու կանոնավոր հաճախումը կանխող խնդիրների լուծման հարցում: Միջին ամսական հաճախումների 85%-ը չպահպանելը կարող է հանգեցնել հեռացման:
- Երեխայի բացակայության մասին Ձեր կենտրոններին չծանուցելու հաճախակի դեպքերը կարող են հանգեցնել ծրագրից հեռացվելուն:

Դպրոցից ուշ վերցնելու քաղաքականություն և ընթացակարգ

Երեխաներին պետք է վերցնել դպրոցի աշխատանքային ժամերի ընթացքում: Երեխաներին կհանձնեն միայն 18 տարեկան և ավել տարիքի անձանց, ում անունը նշված է քարտի հրատապ հարցերի բաժնում, և նրանց կխնդրեն ներկայացնել նկարով անձը հաստատող փաստաթուղթ:

Դպրոցից ուշ վերցնելու երեք (3) կամ ավելի դեպքերը կարող են հանգեցնել կենտրոնի անձնակազմի հետ հանդիպման:

Հետևյալ ընթացակարգերը պետք է պահպանվեն.

1. Չնախատեսված հանգամանքների դեպքում խնամակալը կկանչի աշխատակիցներին՝ տեղեկացնելու նրանց, որ ուշանալու է և պետք է նշի դասասենյակ ժամանման սպասվող ժամը: Եթե դպրոցի հետ չեն կապվում, և լիազորված անձինք հասանելի չեն երեխային վերցնելու համար, դպրոցը պետք է դիմի տեղի ոստիկանության բաժին:
2. Խնամակալը կտեղեկացնի անձնակազմին վերցնելու թույլտվության, արտակարգ իրավիճակների հեռախոսահամարների և անձնական տվյալների (հեռախոսահամարներ, հասցե և այլն) ցանկացած փոփոխության մասին:

Ընտանեկան թույլատրված արձակուրդ (LOA)

Եթե Ձեր երեխան (երեխաները) չնախատեսված արտակարգ իրավիճակի պատճառով երկար ժամանակով (1 շաբաթ կամ ավելի) չեն կարող մասնակցել ծրագրին, խնամակալը կարող է խնդրել թույլատրված արձակուրդ (LOA) մինչև 30 օրացուցային օր տևողությամբ: Հարցումը կարող է լրացնել Ձեր ընտանեկան փաստաբանը, տնային ուսուցիչը կամ դասուսույցը:

Արձակուրդ չի տրվում հանգստի համար: Ձեր երեխան պետք է վերադառնա արձակուրդի վերջում: Եթե Ձեր երեխան չվերադառնա, նա կարող է կորցնել իր տեղը ծրագրում:

Եթե Դուք ընդգրկված եք CSPP կամ CCTR ծրագրում, ապա իրավասու չեք LOA-ի համար: Խնդրում ենք ուղղակիորեն կապվել Ձեր կենտրոնի հետ՝ այլընտրանքային տարբերակները քննարկելու համար:

Երեխայի հանձնում

Քանի որ մենք նախ և առաջ հոգում ենք երեխաների բարեկեցության մասին, եթե որևէ մեծահասակ կենտրոն գա հարբած վիճակում, թմրամիջոցների ներգործության տակ կամ երեխայի համար վտանգ ներկայացնի, կենտրոնի աշխատակիցները կգործադրեն բոլոր ողջամիտ ջանքերը՝ խուսափելու երեխային հանձնել այդ անձին: Եթե ներկա անձնակազմի ավագ անդամի կարծիքով երեխային տեղափոխելու համար ժամանած անձը հարբած է, գտնվում է թմրադեղերի ներգործության տակ կամ ագրեսիվ վիճակում, անձնակազմի անդամը պետք է ձեռնարկի հետևյալը.

- Իրավիճակի մասին տեղեկացնել ծնողներից մեկին կամ լիազորված չափահասի:
- Այդ անհատին խնդրել այլ միջոցներ ձեռնարկել երեխային տեղափոխելու համար:
- Առաջարկել զանգահարել մեկ այլ հարազատի, ընկերոջ կամ տաքսի պատվիրել՝ անհատին և երեխային տուն տանելու համար:
- Եթե անհատը ագրեսիվ է և չի լքում տարածքը կամ պնդում է երեխային մեքենայով տուն տանել, կենտրոնի աշխատակիցներն այդ մասին կհայտնեն ոստիկանություն:
- Եթե որևէ անհատ հաճախակի ժամանում է հարբած վիճակում կամ թմրադեղերի ազդեցության տակ, կենտրոնն այդ մասին հաղորդում կներկայացնի երեխաների խնամքի և պաշտպանության հետ կապված այլ համապատասխան պետական մարմիններին:

Առանց ծնողի նախնական թույլտվության կամ գրավոր համաձայնության ոչ ոքի չի թույլատրվի երեխային դուրս տանել կենտրոնի տարածքից: Անծանոթ մեծահասակներից անձնակազմի անդամը կպահանջի ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ՝ լուսանկարով: Երեխային վերցնելու իրավունք ունեցող ցանկացած անձ պետք է լինի նվազագույնը 18 տարեկան:

Ծնողի՝ երեխայի նկատմամբ հասանելիությունը սահմանափակելու համար անհրաժեշտ է դատարանի որոշում: Խնդրում ենք գրասենյակին հայտնել խնամակալության կարգավիճակի ցանկացած փոփոխություն, որի մասին ցանկանում եք, որ Ձեր երեխայի կենտրոնը տեղյակ լինի: Սահմանափակման որոշման պատճենը պետք է պահվի մեր Կենտրոնում: Սահմանափակված անձի կողմից երեխային կենտրոնից տանելու ցանկացած փորձի մասին կտեղեկացվի ոստիկանությանը:

Տոներ

CCRC-ն տարբեր ծագում ունեցող մարդկանց բազմամշակութային համայնք է: Մեր գործունեությունը և առօրյա շփումները հարստացվում են միմյանց ընդունելով և միմյանցից սովորելով՝ դրական ներգրավվածության և փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Ընտանեկան ավանդույթների և տոների փոխանակումը մեր ուսումնական ծրագրի կարևոր մասն է: Տոներն ու տոն օրերը նշվում են երեխաների հետ՝ որպես հատուկ միջոցառումներ և որպես մեր ընթացիկ ծրագրի մաս: Ընտանիքներին խրախուսվում է ներկայացնել իրենց ավանդույթները ծրագրի անձնակազմին՝ ապահովելու բոլոր ընտանիքների ներկայացված և ճանաչված լինելը:

Երեխաների ծննդյան օրերը կարող են նշվել ուսումնական միջավայրում: Այնուամենայնիվ, դրսից սնունդ բերել չի թույլատրվում, ինչպես նշված է մեր ծրագրերի սննդային քաղաքականության մեջ:

Եթե ցանկանում եք կամավոր աշխատել և հատուկ գործունեություն ծավալել Ձեր ընտանիքի ավանդույթների շուրջ, խնդրում ենք խոսել Ձեր ուսուցչի կամ կենտրոնի տնօրենի հետ:

Առողջության և սննդի ծառայություններ

Առողջություն և վաղ մանկության զարգացում

Երեխաների խնամքի ռեսուրս կենտրոն Վաղ խնամքի և ուսուցման ծրագիրը յուրաքանչյուր երեխայի տրամադրում է առողջապահական խնամքի համապարփակ ծրագիր՝ ապահովելու բժշկական, ատամնաբուժական, սննդային, զարգացման և հոգեկան առողջության բավարար կարիքները: Head Start-ն ընդգծում է օպտիմալ առողջություն ձեռք բերելու և պահպանելու կարևորությունը, որը ներառում է օգնություն բժշկական հաստատության և ատամնաբուժարանի հետ համագործակցությանը, առողջության կանոնավոր ստուգումների խթանմանը և առողջության հետ կապված խնդիրների վաղ հայտնաբերմանը, միջամտությանը և հետևողականությանը: Առողջապահական կրթությունը ներառված է ծրագրի բոլոր տարբերակներում, ծնողական կոմիտեում և անձնակազմի վերապատրաստման ժամանակ:

